ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

15 մարտի 2023 թվական

10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.15

Հրաչյա Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 12 անդամ՝

Արման Բաբաջանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,
Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արմեն Ղալեչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մանուել Մարգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Դիանա Քերոբյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Իզաբելլա Աբգարյան՝ Երևան քաղաքի ավագանու անդամ:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է տրանսպորտի ոլորտին: Մեզ, ինչպես նաև բնակչությանը, հուզում է այն հարցը, թե երբ կսկսվի նոր ներկրված ավտոբուսների շահագործումը: Երկրորդ հարցս հետևյալն է. այսօր խոսեցիք Նորքի անտառների կանաչապատման, անտառտնկման մասին, ինչը շատ

ողջունելի է: Կուզենայի բարձրաձայնել նաև Ծիծեռնակաբերդի բարձունքի անտառի հետ կապված: Չնայած մենք համայնքապատկան 8.5 հա տարածքը կանաչապատեցինք, ծառատնկեցինք, սակայն այնտեղ կա նաև ոչ համայնքապատկան տարածք, որտեղ անմխիթար վիճակ է, ծառերը չորանում են չոռոգվելու պատճառով: Կա՞ հնարավորություն պատկան մարմինների հետ ընդհանուր լուծում գտնելու, ոռոգման ցանցը վերականգնելու և անտառը փրկելու համար, շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, Դուք իրավացի եք, մենք նախատեսում էինք ավելի շուտ շահագործել տրանսպորտը: Հարցը կայանում է նրանում, որ պլանավորել էինք, որ դեռ անցյալ տարեվերջին այդ ավտոբուսները կլինեն Հայաստանում, բայց ներկրումը սկսվեց հունվարից, և փետրվարի կեսերին նոր մենք ամբողջությամբ ավարտեցինք: Դա վերաբերում է և 8,6 մետրանոց «ԺՈՆԳ ԹՈՆԳ», և «ՄԱՆ» մակնիշի ավտոբուսներին: Այս պահի դրությամբ քննարկվում է մաքսազերծման և ավելացված արժեքի հարկի հարցը: Վաղը ՀՀ կառավարության նիստի օրակարգում մաքսազերծման հետ կապված հարց կա, որից հետո, կարծում եմ, կլուծենք ավելացված արժեքի հարկի հետ կապված վճարման հարցերը, փոխանցումները կիրականացնենք, և առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, կարծում եմ, առաջին երթուղին հնարավորություն կունենանք շահագործելու: Այդպիսով կսկսենք երթուղային գծերի փոփոխություն իրականացնել հետևյալ սկզբունքով. որտեղ ավտոմեքենաների քանակը քիչ է, այդտեղ նոր շարժակազմ կավելացնենք, որից հետո, «Գազել» մակնիշի մեքենաները, որոնք նորմալ չեն սպասարկում, կփոխարինվեն ավտոբուսներով:

Ինչ վերաբերում է Ծիծեռնակաբերդի կանաչապատմանը, ոռոգման ցանցի մեծ ծավալի աշխատանքներ ենք իրականացրել, մի մասը նաև՝ ՀՀ կառավարության աջակցությամբ, ինչը մեզ հնարավորություն է տվել ունենալ այլընտրանքային ջրի աղբյուր՝ Ծիծեռնակաբերդի բարձունքը ոռոգելու համար, և դա էր պատճառը, որ միայն 2022թ. աշնանն այնտեղ, համայնքապատկան տարածքում, մենք ծառատունկ իրականացրեցինք, և այդ ջրի ծավալն այնքան բավարար է, որ հնարավորություն կա ամբողջ բարձունքը ոռոգելու: Այնտեղ շուրջ 90 հեկտարը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ենթակայության տակ է: Ժամանակին քննարկումներ ունեցել ենք, որպեսզի նշված տարածքը սպասարկի համայնքը: Որոշ ֆինանսավորում ԿԳՄՍ նախարարության կողմից ստանում են, բայց դա, կարծում եմ, այդքան էլ բավարար չէ, և մենք հնարավորություն կունենանք մոտ ժամանակներս այդ հարցը նորից բարձրաձայնելու և ֆինանսավորման միջոցներ ավելացնելու, որպեսզի կարողանանք այնտեղ՝ ոչ համայնքապատկան տարածքում, կանաչապատում իրականացնել:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է Հյուսիս-Հարավ մայրուղուն, որն անցնում է Աջափնյակ վարչական շրջանի տարածքով: Բոլորս գիտենք, որ Շիրազի փողոցի և Սիլիկյան խճուղու հատվածում կա մի անհասկանալի շրջանաձև երթևեկություն, որը խոչընդոտում է ընդհանուր երթևեկությանը: Հյուսիս-Հարավը կառուցել ենք որպես արագընթաց մայրուղի, սակայն առավոտյան ժամը 8.30-

10.00 և երեկոյան ժամը 17.00-19.00 հատվածներում այնտեղով երթևեկելն անհնար է՝ այդ շրջանաձև երթևեկության պատճառով: Ունեմ մի քանի առաջարկ. Շիրազի փողոցում կա հատված, որտեղ հասարակական շինությունները ճամփեզրից հեռու են կառուցված՝ հետագայում Շիրազի փողոցը լայնացնելու նպատակով, որը շատ տեղին կլինի Հյուսիս-Հարավ մայրուղին բեռնաթափելու համար, և կխնդրեմ, եթե հնարավոր է, երթևեկության այդ սահմանումը վերացվի այդտեղից:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, այո, այդտեղ նման խնդիր կա: Պլանավորված է ճանապարհն ամբողջությամբ շահագործման հանձնել հունիս-հուլիս ամիսներին, այս պահին ընթանում են քննարկումներ, և պայմանավորվածություն կա ճանապարհը բացելուց հետո նորից վերանայել երթևեկության կազմակերպումը, որի ընթացքում կքննարկենք նաև Ձեր բարձրացրած հարցը:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս վերաբերում է կառուցապատմանը: Բազմաթիվ ներդրողներ ահազանգում են, որ խնդիր ունեն կապված գազի տեխնիկական պայմանների տրամադրման հետ: Օրինակ, Աջափնյակ վարչական շրջանում կառուցվելիք բազմահարկ շինության համար «Երևանգազ» ԳԳՄ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանը ստանում են Քանաքեռում, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կառուցապատողը ստանում է Արգավանդում, որը շատ անհասկանալի է: Ի՞նչ մեխանիզմ կարող եք կիրառել, որպեսզի ներդրողների կողմից տեխ. պայմաններ ստանալը հեշտացվի: Կույր պետք է լինել, որպեսզի չնկատել, որ այս ամենն արվում է միտումնավոր, որոշ կոռուպցիոն սխեմաներ մտածելու համար: Ես կարծում եմ, որ որպես քաղաքապետ Դուք պետք է կանգնած լինեք կառուցապատողի կողքին, շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Հարությունյան, այս հարցը քննարկվել է նաև ՀՀ կառավարությունում և էկոնոմիկայի նախարարությունում: Քանի որ Երևան համայնքում բավականին մեծ ծավալով կառուցապատում է տեղի ունենում, գազի այն հիմնական խողովակները, որոնք ապահովում էին անհրաժեշտ ծավալի սնուցում, չեն բավարարում: Դա է պատճառը, որ մատակարար կազմակերպության կողմից տրվում են այն վայրերը, որտեղ որ հնարավորություն կա այդ ծավալի գազ մատակարարել տվյալ շենքին: Այս պահի դրությամբ արդեն որոշակի աշխատանքներ են սկսվել, որոնց շնորհիվ հնարավոր կլինի տարբեր վարչական շրջաններում, այսինքն քաղաքի տարբեր՝ հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան հատվածներում՝ 4 հիմնական սնուցող աղբյուրներում, մեծացնել գազի մատակարարման ծավալը:

Պարոն Արեյան, եթե տեղեկություն ունեք հաղորդելու հարցի վերաբերյալ, խնդրեմ:

Կամո Արեյան

-Շնորհակալություն, ասեմ, որ քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի կողմից «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը տրամադրվել է մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում կառուցապատման համար տրված շինարարական թույլտվությունները և կառուցապատողների կողմից ներկայացված պահանջարկը, այսինք շատ գրագետ մոտեցում է ցուցաբերվել հաշվարկային ծավալները ճշտելու համար: Առաջին փուլը

ավարտված է: Այդ հաշվարկային ծավալների հիման վրա «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն այս պահին տվել է երեք ուղղություն, առաջինը՝ Առինջից, ԳԲԿ 1-ից մտել է Արաբկիր վարչական շրջան, այնուհետև՝ Սարալանջ-Անտառային փողոցների կառուցապատման հատվածից մինչև Տերյան 107 հասցե՝ հարակից տարածքի կառուցապատման ծավալները բավարարելու համար: Երկրորդի շինթույլտվությունը տրվել է արդեն Երևանի քաղաքապետի կողմից՝ 15-20 կմ Մասիս ԳԲԿ-ից գազատարը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանով, Իսակովի պողոտայի հարակից հատվածով, Մոնթե Մելքոնյան փողոցով բարձրանալու է Դալմայի այգիներին հարող տարածք, ինչպես նաև հատելով Լենինգրադյան փողոցը, գնալու է դեպի Աջափնյակ վարչական շրջան՝ ընդգրկելով «Դեֆանս Հաուզինգի» տարածքը: Սրա հետագիծը քննարկել, հաստատել ենք, քաղաքապետի կողմից տրված է շինթույլտվությունը, որը մեկնարկել է այս տարի: Ավան վարչական շրջանի կառուցապատման գոտու համար ծառայելու է Արաբկիր վարչական շրջան մտած գազատարը, որն իր մեջ ընդգրկում է Ավան, Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների կառուցապատման ողջ ծավալը: Երրորդը՝ Նուբարաշենի ԳԲԿ-ից եկող գազատարն է, որն այս տարի չի մեկնարկելու, որովհետև այդ ծավալը դեռ չի ձևավորվել: Այն ապահովելու է Նորք Մարաշ վարչական շրջանի բարձրահարկ կառուցապատումների ծավալը: Քաղաքապետի հանձնարարությամբ քննարկումը վարել եմ անձամբ, ներկայացրել եմ պարոն Սարգսյանին, համաձայնեցված է «Գազպրոմ Արմենիա» ընկերության հետ, և, որ ամենակարևորն է, վերջինս պատրաստ է անհատույց պահպանել և շահագործել այդ գազատար խողովակները: Եթե կա առանձին հարց, որտեղ կառուցապատողը թյուրիմացության մեջ է, կամ տեխնիկական պայմանը ոչ ճիշտ է տրված, խնդրում եմ տրամադրել մեզ: Մենք թույլ չենք տա, որպեսզի նման փակուղի լինի կառուցապատողի համար: Վստահեցնում եմ Ձեզ, «Գազպրոմ Արմենիա» ընկերությունը պատրաստ է ընդառաջ գնալ տեխնիկական պայմանները այս նոր սխեմայով տրամադրելու հարցում:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է Բաղրամյան 1 հասցեի ապօրինի շինությանը, ինչը անհանգստացնում է բակի բնակիչներին: Դա ունի տարիների պատմություն, սակայն ոչ մի լուծում չի տրվել հարցին:

Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ռոմանոս Սաֆարյանը, խնդրեմ:

Ռոմանոս Սաֆարյան

-Շնորհակալություն, այս պահին ոչ մի տեղեկություն չունեմ, անպայման կուսումնասիրենք, Ձեզ կզեկուցենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է գծանշումներին. արդյոք քաղաքում արված գծանշման աշխատանքները համարվում են բավարար, որովհետև մի քանի ամիս առաջ արված գծանշումներն արդեն մեծամասամբ ջնջվել են, կամ ինչ է ձեռնարկվում այդ մրցույթը շահած կազմակերպության նկատմամբ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ասեմ, որ գծանշումներն իրականացվում են մի քանի տեխնոլոգիաներով: Երևան քաղաքում ընդհանուր առմամբ գծանշում իրականացվում է տարեկան երկու անգամ՝ գարնանը և աշնանը: Ձեզ հետ համամիտ եմ, որ 2022թ. գարնանը գծանշման աշխատանքները վատ էին իրականացվել, բայց աշնանը՝ բավականին լավ: 2023 թվականի համար մենք մրցույթը հայտարարել ենք, արդեն ունենք հաղթող կազմակերպություն, մոտ ժամանակներս այդ կազմակերպությունը կսկսի Երևան քաղաքում իրականացնել գծանշման աշխատանքներ, որից հետո կհասկանանք, թե ինչ որակով են կատարվել այդ աշխատանքները: Իսկ նախկին թերությունների համար կամ կազմակերպությունն իրականացրել է կրկնակի գծանշում, կամ չի վճարվել աշխատանքի դիմաց:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է Ձեր այն հանձնարարականին, որ բոլոր տնտեսվարողները պետք է ծանուցվեին Երևանի ավագանու որոշման մասին, որի համաձայն նրանք պետք է բարեկարգեին իրենց հարակից տարածքները: Արդյոք ծանուցվել են բոլոր տնտեսվարողները, և ի՞նչ արդյունք ունենք դրանից, կա՞ արդյոք նման վերլուծություն. բոլորը կատարե՞լ են իրենց պարտականությունները, թե կիրառվել են վարչարարություններ: Եթե չեմ սխալվում, դրա մեջ մտնում են ոչ միայն տարածքի մաքրումը, այլ նաև բարեկարգումը: Շատ տեղերում սալիկները կամ բացակայում են, կամ կոտրված են: Դա վերաբերում է, առաջին հերթին, Կենտրոն վարչական շրջանի տնտեսվարողներին, որովհետև բոլորին պարզ է, որ ամենամեծ շահույթը ստանում են իրենք, շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Արամ Դանիելյանը:

Արամ Դանիելյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, լինելով այդ հարցի համակարգող, ասեմ, քանի որ այս խնդիրը երկար ժամանակ բաց էր մնացել, և կան կուտակված խնդիրներ, մենք կոլեգիալ որոշեցինք, որ աշնան վերջին բոլոր տնտեսվարողները ծանուցված լինեն, որպեսզի համար մեկ խնդիրը լինի ձնամաքրումը՝ հետիոտնի համար անվտանգություն ապահովելու համար: Բոլոր վարչական շրջանների աշխատակազմերը 98-99%-ով ծանուցվել են, որն այս իմաստով աննախադեպ արդյունք է: Տնտեսվարողների հետ համագործակցային տրամադրությունների մեջ լինելու և գործընկերային դաշտ ստեղծելու համար վարչարարություն չի արվել: Սակայն, քանի որ այս տարի ձյուն չտեղաց, տնտեսվարողներն առանձնապես նեղություն չկրեցին, հիմա արդեն՝ գարնանը, պետք է կատարեն կանաչապատում և բարեկարգում, բայց բարեկարգման հետ կապված մենք ևս մի խնդիր ունենք: Քաղաքը պետք է ունենա հայեցակարգ, որպեսզի յուրաքանչյուր տնտեսվարող իր ճաշակով ինչ որ բան չանի, իսկ այդ հայեցակարգը պետք է մենք մշակենք և ներկայացնենք տնտեսվարողներին: Փորձում ենք քայլ առ քայլ խնդիրները կարգավորել, որպեսզի տնտեսվարողների հետ հարաբերությունները ճիշտ լինեն:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս, որը նաև շատ հետաքրքրում է մեր համաքաղաքացիներին, վերաբերում է Նորքի հին ճոպանուղուն: Քաղաքացիների ցանկությունն է, որպեսզի վերականգնվի ճոպանուղին՝ Նորքից դեպի քաղաքի կենտրոն երթևեկության ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար: Արդյո՞ք սեփականաշնորհված է վերջինիս ադմինիստրատիվ շենքը, որը գտնվում է անմխիթար վիճակում, և ի՞նչ ճակատագիր է սպասվում նրան: Շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Կարծում եմ հարցադրումը պետք է լիներ այս տրամաբանությամբ՝ արդյոք նախատեսում ենք շահագործել նախկինում գործող ճոպանուղու ուղղությունը, անկախ այն բանից, թե շենքը ում է պատկանում:

Հարցի հետ կապված պարզաբանում կանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը, խնդրեմ:

Տիգրան Ավինյան

-Որքանով ես տեղյակ եմ, նախկին ճոպանուղու ճանապարհին, արդեն իսկ բնակելի տների և բազմաբնակարան շենքերի կառուցապատումներ են իրականացվել, ինչի պատճառով մեզ թույլ չի տրվելու նույն երթուղին վերականգնել, բայց առանձին հարց է նախագիծ քննարկելը, որը 2018-2019թթ նույնպես եղել է, և հիմա լավ առիթ է այդ քննարկումները թարմացնելու և հասկանալու, թե արդյոք այդտեղ որևէ ծրագիր հնարավոր է իրականացնել, թե ոչ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս, որը նույնպես հուզում է մեր համաքաղաքացիներին, վերաբերում է նախկին Երիտասարդական պալատի տարածքին: Կարողանու՞մ են արդյոք նշված տարածքի սեփականատերը և Երևան համայնքը գտնեն մի ընդհանուր կոնցեպտ կամ ինչ որ ծրագիր, որով, ի վերջո, կկառուցվի մի շինություն, որը կլինի խորհրդանշական, ինչպիսին նախկինում Երիտասարդական պալատն էր:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը, խնդրեմ:

Տիգրան Ավինյան

-Մենք հանդիպել ենք տարածքի սեփականատիրոջ հետ, և ուզում եմ շեշտել, որ դա ներդրումային ծրագրով տրամադրված տարածք է: Կա նախագիծ, որն իրականացվել է ճապոնացի ճարտարապետի կողմից, որը մեր համար ընդունելի տարբերակ է, և մենք ներդրողին խնդրել, հորդորել ենք, որպեսզի գործընթացն արագացնի: Այս առումով ուզում եմ հատուկ շեշտել, որ քաղաքն այսուհետ հետևողական է լինելու մասնավորապես այն ներդրումային ծրագրերին, որոնց ներդրողները կոնկրետ պարտավորություններ են ունեցել այդ ծրագրերով, սակայն ծրագրերը տարիներով չեն իրականացվել: Օգտվելով առիթից ուզում եմ հիշեցնել այն ներդրողներին, ովքեր ներդրումային ծրագրերով, կամ միգուցե առանց դրանց, սեփականության իրավունքով ունեն պատմամշակութային հուշարձան հանդիսացող շենքեր, որտեղ պետք է իրականացնեին աշխատանքներ, բայց հապաղում են, այդտեղ էլ պետությունը, մասնավորապես՝ ԿԳՄՍ նախարարությունը, ունի որոշ օրենսդրական հնարավորություններ՝ որոշակի ժամկետում ծրագիր չիրականացնելու դեպքում այդ շենքերը սեփականության իրավունքով վերադարձնելու պետությանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, այո, տարբեր նախագծեր են եղել ներդրողի կողմից, հաղթել է ճապոնացի ճարտարապետը, բայց, բավական երկար ժամանակ է անցել և միգուցե վերանայման անհրաժեշտություն լինի, քանի որ տարիներ են անցել, գիտությունը զարգացել է, փոխվել են տեխնոլոգիաները և նյութերը: Միգուցե հնարավոր լինի միջազգային մրցույթ հայտարարել և ունենալ ավելի լավ արդյունք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջինը հետևյալն է. Երևան քաղաքը ե՞րբ կունենա գլխավոր հատակագիծ: Քաղաքն անընդհատ զարգանում է, իսկ գլխավոր հատակագիծը չի համապատասխանում բազում խնդիրներին և բազմաթիվ խնդիրներ է առաջացնում թե շինթույլտվություններ ստանալու և թե ինքնակամ շինությունների օրինականացման ժամանակ: Ես կարծում եմ, որ դա շատ հրատապ հարց է և ուզում եմ իմանալ, թե ի՞նչ փուլում են գլխավոր հատակագծի աշխատանքները, և ի՞նչ խանգարող հանգամանքներ կան դրանք ավարտելու համար:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Ստեփան Մաչյանը, խնդրեմ:

Ստեփան Մաչյան

-Շնորհակալություն, բոլորս տեղյակ ենք, որ գլխավոր հատակագծի առաջադրանքը հաստատվել է Երևանի ավագանու կողմից և այս պահին ակնկալվում է հաջորդ փուլը՝ գլխավոր հատակագծի մշակման համար մրցույթի հայտարարումը: Մենք ունենք երկու գլխավոր խնդիր, որ ցանկանում ենք նոր գլխավոր հատակագծում պարտադիր լուծել: Առաջինը տեղեկատվության թվայնացումը և գլխավոր հատակագծի պարտադիր թվային և տարածաչափական ձևաչափով ունենալն է, երկրորդը վերաբերում է այն ինֆորմացիոն համակարգին, որտեղ տեղադրվելու է գլխավոր հատակագիծը: Կոնկրետ այս պահին աշխատում ենք նաև Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս շրջանի մասնագետների հետ: Երկու քաղաքների միջև համագործակցության հուշագրի շրջանակներում բավականին լայնածավալ փոխգործունեություն է իրականացվում, և մենք ամենշաբաթյա աշխատանքների միջոցով փորձում ենք գալ ամենաօպտիմալ թվային լուծմանը: Այս պահի դրությամբ աշխատում ենք նաև GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) համակարգի տեղադրման ուղղությամբ: Այս երկու աշխատանքները համադրելով՝ մենք արդեն կհայտարարենք գլխավոր հատակագծի մշակման մրցույթը:

Տիգրան Գալստյան

-Իսկ «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունը մասնակցելու՞ է այդ մրցույթին, և ժամկետներ կարո՞ղ եք նշել:

Ստեփան Մաչյան

-Այո, «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունը, ակնկալում եմ, որ մասնակցելու է նշված մրցույթին, իսկ պայմանագիրը կնքելուց հետո ժամկետները նախատեսում ենք 18-24 ամիս:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է Երևան քաղաքում տրված բենզալցակայանների բազմաթիվ թույլտվություններին: Ես կարծում եմ, որ դրանք տրվել են բազմաթիվ նորմերի խախտումներով: Օրինակ՝ Հրաչյա Քոչարի փողոցի վրա գտնվող

«Տիտան» բենզալցակայանը, դրա նման բազմաթիվ այլ բենզալցակայաններ, որոնք կառուցված են մարդաշատ փողոցներում և խաչմերուկներում և առաջացնում են անվտանգային խնդիրներ: Ի՞նչ ճակատագիր են ունենալու նման բենզալցակայանները:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, բառացիորեն անցյալ շաբաթ քննարկում եղավ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մասնակցությամբ, որտեղ ներկա էին վառելիքի վաճառքի տարբեր մատակարարներ: Տեսչական մարմնի կողմից գույքագրվել են խնդրահարույց լիցքավորման կայանները և, կարծում եմ, մոտ ժամանակներս գործողություններ կիրականացվեն:

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, շատ ուրախալի է, որ Նոր Նորք վարչական շրջանում Տորք Անգեղի արձանի հարակից կանաչ գոտին շուտով կվերածվի գեղեցիկ զբոսավայրի: Սակայն արձանի հարակից ձորակի բնակիչների կողմից մի խնդիր է բարձրաձայնվում. ասում են, որ այդտեղով հոսում է Ջրվեժ գետակը, որը ժամանակ առ ժամանակ վարարում է: Արդյոք հաշվարկված է այն հանգամանքը, որ գետը վարարելուց կարող է ջրի մակարդակն այնքան բարձրանա, որ այգուն վնաս տա: Կխնդրեմ նաև ներկայացնեք այգու հիմնման ժամանակացույցը և այն առանձնահատկությունները, որոնց մասին կուզենայիք երևանցիները ևս մեկ անգամ լսեին: Շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Արմեն Միերյանը, խնդրեմ:

Արմեն Միերյան

-Շնորհակալություն հարցի համար, պարոն Անտոնյան: Քանի որ նախատեսվում է մեծ նորարարական այգի ստանալ, ուստի նախագծի վրա շատ մեծ թիմ է աշխատում: Իհարկե, անհեթեթություն կլիներ նման մեծ նախագիծ մշակելիս չնախատեսել նաև ջրահեռացման համակարգը: Քանի որ տվյալ հատվածում կատարվելու է հսկայական կանաչապատում, ուստի նախագծող թիմը նախատեսել է նաև հորատման միջոցով ստանալ ոռոգման համակարգ՝ ոռոգելու համար ամբողջ կոմպլեքսը, որն ունենալու է մոտ 970 մետր երկարություն: Նախագծով նախատեսված է նաև բիոզուգարանների տեղադրում: Նախագծող թիմը համագործակցում է վարչական շրջանի աշխատակազմի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի, քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության հետ, հաշվի են առնվում բոլոր մանրամասները, այնպես որ, հավաստիացնում եմ, որ ունենալու ենք 21-րդ դարին համապատասխան այգի:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն հանգամանալից պատասխանի համար, կցանկանայի տեղեկանալ նաև աշխատանքային ժամանակացույցից:

Արմեն Միերյան

-Կախված մրցույթի հայտարարումից և շահողից՝ նախատեսվում է հիմնական աշխատանքներն ավարտել այս տարի, բայց այգու վերջնական բացումը կլինի հաջորդ տարում, գարնանային ծառատունկից հետո:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է պետական խորհրդանիշերից մեկին՝ դրոշին: Նախ կուզենայի իմանալ, թե համապատասխան շենքերի վրա ի՞նչ կարգավորումներով են տեղադրվում ՀՀ դրոշները, և արդյոք մենք հնարավորություն չունենք Երևան քաղաքում մեծարել և հնարավորինս շատ ծածանել Երևանի դրոշը: Եթե սա կընդունվի որպես առաջարկ, կամ հավանության արժանանա, միգուցե քաղաքապետի որոշումով կարգավորվի, առնվազն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի շենքերում և համայնքապատկան կարևորագույն կառույցներում ՀՀ դրոշի հետ մեկտեղ ծածանվի նաև Երևանի դրոշը: Դա անհրաժեշտ է ոչ միայն տեսանելի դարձնելու համար մեր հարգանքը Երևանի խորհրդանիշի նկատմամբ, այլ այն կարող է ունենալ զբոսաշրջային մեծ հետաքրքրություն: Շնորհակալություն:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-«Պետական դրոշի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերում պարտադիր պետք է տեղադրված լինի ՀՀ դրոշը: Կան նաև կարգավորումներ, որ դրոշը պետք է երեկոյան ժամերին լուսավորված լինի և այլն: Երևան համայնքի դրոշի հետ կապված կարգավորումներ չունենք, սակայն, եթե հարցը վերաբերում է միայն համայնքին պատկանող վարչական շենքերին, ապա այդ հարցը կարգավորվում է Երևանի քաղաքապետարանի կանոնադրությամբ, որը հաստատում է ավագանին, կարող ենք քննարկել և լուծել: Ինչ վերաբերում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շենքերի վրա տեղադրված պետական դրոշներին, ապա կարգավորումներ, ցավոք, առկա չեն, սակայն 1-2 շաբաթ առաջ մենք այդպիսի քննարկում արդեն իսկ ունեցել ենք և այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկում ենք: Վերջնական եզրահանգում լինելու դեպքում Ձեզ հետ կքննարկենք:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, կուզենայի իմանալ ո՞վ է Երևան քաղաքում կարգավորում և իրականացնում գունաթափված ու պատռված դրոշների փոփոխությունները և ո՞վ է իրականացնում վերահսկողությունը:

Հրաչյա Սարգսյան

-Երևան համայնքի ենթակայությամբ գործում է «Ձևավորում» ՓԲ ընկերություն: Ամեն տարի դրոշների ձեռքբերման մրցույթ ենք հայտարարում, և անհրաժեշտության դեպքում, եթե վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերից տեղեկացնում են, որ կա դրոշի փոխարինման անհրաժեշտություն, դիմում են «Ձևավորում» ՓԲ ընկերությանը, որն էլ իրականացնում է այդ աշխատանքները:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, այսօրվա նիստի սկզբում Դուք խոսեցիք բրենդավորման մասին: Կխնդրեմ մի փոքր ավելի մանրամասնեք արդյո՞ք եղել է մրցույթ, և ովքեր են մշակել այդ չափորոշիչները:

Հրաչյա Սարգսյան

-Այս պահի դրությամբ մրցույթ չի եղել, այժմ չափորոշիչների մշակման փուլն է, երբ որ ավարտուն տեսք ունենանք, կդնենք հանրային քննարկման, որից հետո կհայտարարենք բաց մրցույթ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, կուզենայի տեղեկանալ նաև 28 փողոցների մալուխների վերաբերյալ, որոնք պետք է դառնան ստորգետնյա:

Հրաչյա Սարգսյան

-Բավականին բարդ ճանապարհ ենք անցնում, կապալառու կազմակերպությանը երևի վերջին հնարավորությունն ենք տրամադրել, որպեսզի իր աշխատանքներն իրականացնի և, եթե ևս մեկ անգամ չկատարի, ստիպված ենք լինելու պայմանագիրը խզել և համապատասխան բանկային երաշխիքները հետ գանձել կազմակերպությունից, քանի որ համայնքը բոլոր խնդիրների լուծմանն ընդառաջ է գնացել, բոլոր հարցերում փորձել է հարմարվել, բայց կապալառու կազմակերպության կողմից առաջընթաց չի նկատվում: Պայմանավորվածություն կա, որ մեկ փողոցում պետք է սկսեն աշխատանքներ իրականացնել և, եթե ամեն ինչ լինի բարվոք վիճակում, կշարունակենք, եթե ոչ՝ պայմանագիրը կխզենք:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Ղալեչյան, խնդրեմ:

Արմեն Ղալեչյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, բոլորիս հայտնի է, որ վերջերս ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինն իրականացնում է գործող նորմատիվների պահանջներին չհամապատասխանող լցակայանների գործունեության դադարեցման գործընթաց: Ի՞նչ մասնակցություն ունի Երևանի քաղաքապետարանն այս գործընթացին: Խնդրում եմ պատասխանել, հաշվի առնելով որ, ինչպես նշվեց, այդ բենզալցակայաններից շատերն ապօրինի են կամ վարձակալական հիմունքներով, և եթե չեմ սխալվում, հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն տալիս է քաղաքապետարանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, այո, ինչպես նշեցի, խորհրդակցություն է տեղի ունեցել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ, այս պահին քաղաքապետարանը, տեսչական մարմինը և փոխվարչապետի գրասենյակը գործողությունների հերթականության համատեղ ծրագիր են մշակում: Համայնքն այստեղ ուղղակի պատասխանատվություն չի կրում, խնդիրները պետք է լուծվեն համատեղ՝ ոստիկանության մասնակցությամբ:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մանուել Մարգարյան, խնդրեմ:

Մանուել Մարգարյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է Երևան քաղաքի այն ապօրինի շինություններին, որոնք մինչև 2023թ. հունվարի 1-ը չեն հաշվառվել: Ինչ է լինելու դրանց կարգավիճակը, ինչը շատ հուզում է քաղաքացիներին:

Հրաչյա Սարգսյան

-Այս պահին օրենքով սահմանված ոչինչ չկա: Նրանք կարող են հաշվառել գույքը, բայց օրինականացման ենթակա չի լինի:

Մանուել Մարգարյան

-Երկրորդ հարցս վերաբերում է կառուցապատմանը: Շինարարության թույլտվություն տալուց առաջ պարտադիր պետք է տրվի կոմունիկացիոն գծերի թույլտվություն: Ուզում եմ հասկանալ, թե ինչու դա չի արվում փուլային տարբերակով, քանի որ թույլտվության տարբեր տեսակներ են, և բազմաթիվ դեպքեր կան, երբ շինարարությունը 1-2 տարով հետ է ընկնում:

Հրաչյա Սարգսյան

-Այո, դա կարգավորվում է ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշմամբ: Ինչ վերաբերում է փուլային տարբերակին, ապա քաղաքը դրա շատ վատ նախադեպեր ունի: Իհարկե, շատ լավ կլիներ, որ մենք ամբողջը թվայնացված ունենայինք՝ և ենթակառուցվածքները, և ճանապարհները, և Երևանի ու վարչական շրջանների ճշգրտված սահմանները, և հողի կատեգորիաները: Աշխատանքի զգալի մասը արվում է ձեռքով, այդ պատճառով գործընթացը երկարում է, բայց ես այդտեղ խնդիր չեմ տեսնում: Կարծում եմ, որ այս պահին Երևանում շինթույլտվությունների տրամադրման մասով մեծ խնդիրներ չունենք: Վստահաբար ասում եմ Ձեզ, որ մենք շատ տեղերում ունենք տրամադրած շինթույլտվություններ, շենքերը կառուցված են, բայց ենթակառուցվածքների մասով խնդիրներ ունենք:

Պարոն Ավինյան, եթե ավելացնելու բան ունեք, խնդրեմ:

Տիգրան Ավինյան

-Բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունների հետ կապված հասկանալի է, շատ լավ բիզնես է, ներդրողները ցանկանում են շատ արագ կառուցել, արագ վաճառել, շահույթը ստանալ և դուրս գալ, իսկ ամբողջ բեռը մնում է քաղաքի ու այդ շենքերում ապրող բնակիչների վրա: Այստեղ մենք պետք է հարցին համալիր մոտեցում ցուցաբերենք: Այո, չպետք է թույլ տանք, որ ներդրումները խոչընդոտվեն, խնդիրներ առաջանան ներդրողների համար, բայց երևանցիների շահերը մեզ համար առաջնային են, նվազագույնը՝ սեյսմիկ, կոմունալ ենթակառուցվածքների և կրթահամալիրների հասանելիության տեսանկյունից: Պետք է պահանջենք, որ ներդրողը հասկանա այս բոլոր խնդիրների պատասխանները, հետո նոր դիմի բազմաբնակարան շենքերի համալիրի կառուցապատման թույլտվություն ստանալու համար:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարցերս վերաբերում են տրանսպորտի ոլորտին: Շուրջ 6 ամիս առաջ ես բարձրաձայնել էի և դիմել էի տրանսպորտի վարչության պետին, որ Չարենցի փողոցից դեպի Սարալանջի փողոց հատվածում 2 նրբանցք կա, որոնք շատ նեղ են և զառիվայր, կարելի է ասել՝ բակային, երկկողմանի երթևեկության համար շատ անհարմար: Այդտեղ բնակիչների միջև անընդհատ խնդիրներ են առաջանում: Նրանք խնդրել էին դիտարկումներ անել և նրբանցքները դարձնել միակողմանի երթևեկելի՝ մեկը դեպի վերև, մյուսը՝ ներքև: Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ հարցը կարգավորելու համար:

Երկրորդ հարցս վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանի հ.163 դպրոցի մոտ գտնվող կանգառին: Բնակիչները խնդրել էին այնտեղ կանգառասրահ տեղադրել: Խնդիրը սակայն կայանում է նրանում, որ այդ կանգառի հատվածը սեփական տարածք է, և պետք է կանգառը տեղափոխվի: Կխնդրեմ սրա հետ կապված որոշ պարզաբանում տալ: Մի հարցի էլ կխնդրեմ պատասխանել կապված Նոր Նորք վարչական շրջանում գործող «Տիտան» սուպերմարկետի դիմացի ավտոկայանատեղիի հետ, որի մասին ես բարձրաձայնել էի դեռ նախորդ տարի, և հարցին լուծում էիք տվել, համայնքային միջոցների հաշվին տեղադրել էիք կանգնակներ՝ հետիոտնի անվտանգ անցուդարձը ապահովելու համար: Մի քանի ամիսների ընթացքում այդ կանգնակները կոտրվեցին: Կարծում եմ պետք է կամ արգելել այդտեղ ավտոկայանատեղիի շահագործումը, որն ապօրինի է, կամ պետք է պարտադրել, որպեսզի վերականգնեն այդ կանգնակները:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Արմեն Միերյանը, խնդրեմ:

Արմեն Միերյան

-«Տիտան» սուպերմարմարկետի դիմացի արգելող սարքերի հետ կապված ասեմ, որ մեր կողմից հաղորդում է տրվել ոստիկանություն և նրանց փոխանցվել է տեսաձայնագրություններ, որտեղ երևում է, որ այդ սարքերի մի մասը կոտրվել է վթարի հետևանքով: Իսկ ինչ վերաբերում է վերականգնմանը, մենք խոսել ենք «Տիտան» սուպերմարկետի սեփականատերերի հետ, և նրանք համաձայնվել են վերականգնել իրենց միջոցներով: Պատվիրել են բարեկարգման նախագիծ, որպեսզի ներկայացնեն վարչական շրջան և հաստատումից հետո, մնացած մյուս տնտեսվարողները նույնպես, պետք է մասնակցեն այդ տարածքի բարեկարգմանը: Ինչ վերաբերում է հ.163 դպրոցի մոտի կանգառին, ապա հենց երեկ եմ եղել դպրոցում, տնօրենի հետ շրջայց ենք կատարել հասկանալու համար, թե ինչ խնդիր է: Այո, այդ հարցը կա, պարոն քաղաքապետ, այդ հատվածը, որը ժամանակին ծառայել է որպես կանգառասրահ, սեփականաշնորհված է և կառուցապատում է իրականացվում: Այնտեղ մնացել է շատ փոքր հատված, որը նորմերով չի համապատասխանում, որպեսզի կանգառասրահ տեղադրվի, բացի այդ, այն գտնվում է խաչմերուկի անկյունային հատվածում, ինչը նույնպես նպատակահարմար չէ անվտանգության տեսանկյունից: Այդ մասին խոսել ենք քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի հետ, ինչպես նաև հորդորել ենք այդ տարածքի սեփականատեր տնտեսվարողին, որպեսզի իր միջոցներով բարեկարգի և պայմաններ ստեղծի տվյալ հատվածում, մինչև հարցը ստանա համապատասխան կարգավորում:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրեմ:

Իզաբելլա Աբգարյան

- Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանին: Դուք տեղյակ եք Ֆուչիկի փողոցի հենապատի պատմությանը: Ես խնդրել եմ, և ինձ տրամադրել են ծավալաթերթը: Իրականում իսկապես ունենք անհամապատասխանություն՝ ծավալաթերթում նշված և իրականում կատարված աշխատանքների միջև: Քաղաքացին ահազանգում է, կոնկրետ փաստեր է նշում, և

վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից ոչ մի կերպ չեն արձագանքել, չեն արձագանքել նաև իմ կողմից հիշատակմանը, փոխարենը քաղաքացուն, չգիտես ինչպես, գտնում է շինարարը: Սա լավ բանի մասին չի խոսում: Ես կմտածեի, որ սա պատահականություն է, եթե նույն վարչական շրջանի մեկ այլ բնակիչ, որն իր վատ բարեկարգած բակի լուսանկարն էր տեղադրել, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից նույնպես չեն արձագանքում, այլ քաղաքացուն հանդիպում է «թաղի տղա» և ասում է, որպեսզի հանի գրառումը: Սա շատ վատ աշխատանքային ձեռագրի մասին է խոսում: Չգիտեմ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում ով է հետևում սոցիալական կայքերի գրառումներին, խնդրում եմ նման բան չկրկնվի, և հուսով եմ, որ քաղաքացիների հետ հաղորդակցությունը կդրվի պատշաճ մակարդակի վրա:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, վերահսկողության վարչություն, խնդրում եմ այս դեպքով ուսումնասիրություն իրականացնել և զեկուցել:

Իզաբելլա Աբգարյան

-Երկրորդ հարցս հետևյալն է. երբ Երևան քաղաքը հայտարարում է ասֆալտապատման մրցույթ, պատվիրում է նաև նախագիծ, որպեսզի գործընթացը լինի ավելի հաշվետու և թափանցիկ: Միևնույն ժամանակ Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը նույնպես հայտարարում են մեծ ծավալի ասֆալտապատման մրցույթներ, բայց առանց նախագծի: Ես ուզում եմ հասկանալ, թե որն է ճիշտը, գուցե քաղաքապետարանն է ավելորդ ծախս անում նախագիծ պատվիրելով, թե՞ վարչական շրջաններն են թերանում և չեն պատվիրում նախագիծ-նախահաշիվ: Բացի այդ, ասֆալտի գինն ըստ վարչական շրջանի տատանվում է ընդհուպ մինչև 50%: Արդյոք այս հարցերը Ձեզ մոտ քննարկվու՞մ են, որպեսզի ներդաշնակություն լինի վարչական շրջանների և քաղաքապետարանի գնումների միջև:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժ/պ Խորեն Գրիգորյանը, խնդրեմ:

Խորեն Գրիգորյան

-Նախագծումը չի կարող ավելորդ լինել, որովհետև գոյություն ունի ՀՀ կառավարության հ.596-Ն որոշում, որի համաձայն պետք է կատարվի կամ նախագծում կամ թերությունների ակտի կազմում: Իսկ գները տատանվելու մասով ասեմ, որ նորմալ է, որ տարբեր կազմակերպություններ կարող են տարբեր գներ առաջարկեն, կասկածելի կլիներ, եթե բոլորի առաջարկած գները նույնը լինեին: Հարցումների արդյունքում ձևավորվում է ամենացածր գնով տրված արժեք, որը դրվում է մրցույթի: Ծավալաթերթը նույն թերությունների ակտի բովանդակությունն ունի: Քաղաքապետարանի պարագայում տրվում է նաև նախագծի էսքիզ: Վարչական շրջանների պարագայում, քանի որ նրանք հիմնականում կատարում են մինչև 1000քմ փոսալցումներ, էսքիզի կարիք չկա, այն բացակայում է իրենց ծավալաթերթերում: Քաղաքապետարանի դեպքում էսքիզի առկայության պարագայում թույլ է տրվում, որ մենք նախագծող պատվիրենք, որը պետք է լինի նեղ մասնագետ՝ ճարտարապետ կամ նախագծող:

Հրաչյա Սարգսյան

-Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝ Ա.Գևորգյան